ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԵՐՐՈՐԴ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թ. սեպտեմբերի 19-21-ը Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում և 23-ին Երևանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նվիրված Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին, որը կազմակերպել էին Արցախի Հանրապետության Ազգային ժողովը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ: Գիտաժողովին մասնակցում էին հայ և այլազգի շուրջ չորս տասնյակ գիտնականներ Հայաստանից, Արցախից, Ռուսաստանի Դաշնությունից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից: Հայաստանյան գիտնականների թվում ներկայացուցչական էր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի յոթ գիտաշխատողների մասնակցությունը:

Ստեփանակերտ հասնելուն պես գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիր և ծաղիկներ խոնարհեցին Հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարում զոհված մարտիկների շիրիմներին՝ ի նշան նրանց անմահ հիշատակի:

Սեպտեմբերի 20-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում հանդիսավորապես բացվեց միջազգային գիտաժողովը: Բացման խոսքով հանդես եկավ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը: Ողջույնի խոսքով հանդես եկան ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Այնուհետև լիագումար զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ԱՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, պ. գ. դ., պրոֆ. Վահրամ Բալայանը, ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ Ռուբեն Գալչյանը (Լոնդոն), պ. գ. դ., պրոֆ. Ալեքսան Հակոբյանը (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ), իսկ սահմանադրական և միջազգային իրավունքի մասնագետ, պրոֆեսոր Օտտո Լուխտերհանդտի (Գերմանիա) զեկուցումն ընթերցեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոց. Լիլիթ Հովհաննիսյանը:

Գիտաժողովի երեք մասնախմբային նիստերն ընթացան իրար զուգահեռ՝ ԱՀ ԱԺ նիստերի դահլիճում, ԱրՊՀ վարչական մասնաշենքում և ԱԺ փոքր դահլիճում: Ա մասնախումբն աշխատում էր «Պատմություն» խորագրի ներքո (նախագահողներ՝ Աշոտ Մելքոնյան, Վահրամ Բալայան, Ալեքսան Հակոբյան, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյան): Բ մասնախմբի խորագիրն էր՝ «Պատմություն և մշակույթ» (նախագահողներ՝ ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Համլետ Պետրոսյան, ԱրՊՀ դասախոս Լեռնիկ Հովհաննիսյան): Գ մասնախումբը կրում էր «Քաղաքագիտություն» խորագիրը (նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ. գ. դ., պրոֆ. Ալեքսանդր Մանասյան, պ. գ. դ., պրոֆ. Արմեն Մարուքյան):

Գիտաժողովի նիստերին մասնակցում էին ԱՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ: Զեկուցողներն իրենց ելույթներում բարձրացնում էին ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում ԼՂ խնդրի համապարփակ կարգավորման, Արցախի իրավական կարգավիճակի վերջնական որոշման՝ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացման և ԼՂՀ անկախության ճանաչման հարցերը:

Մասնախմբերի աշխատանքներն ամփոփվեցին եզրափակիչ լիագումար նիստով, որում կենտրոնականը ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի անկեղծ ու հանգամանալից ելույթն էր՝ նվիրված ԱՀ արտաքին քաղաքականության գերակա խնդիրներին: Դրան հաջորդեցին մասնախմբերի նախագահների հաղորդումները գիտական զեկուցումների արդյունքների վերաբերյալ: Այնուհետև Արցախի Հանրապետության արդի մարտահրավերների վերաբերյալ գիտնականների քննարկումների հիման վրա ընդունվեց Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի բանաձևը, և հրապարակվեց համապատասխան հայտարարություն:

Սեպտեմբերի 21-ին գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Գանձասար, մասնակցեցին «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. Պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)» (Երևան, «Էդիթ պրինտ», «Կաճառ» գիտական կենտրոն, 2021) վերնագրով ժողովածուի շնորհանդեսին, որում ամփոփված են 2020 թ. հուլիսին տեղի ունեցած Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովի զեկուցումները:

Գիտաժողովն իր աշխատանքը շարունակեց սեպտեմբերի 23-ին Երևանում: ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի կլոր սրահում տեղի ունեցավ Կլոր սեղան՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հռչակման 30-ամյակին, որը նախագահում էր ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս, գիտաժողովի կազմկոմիտեի համանախագահ Յուրի Սուվարյանը: Ելույթ ունեցան Յուրի Սուվարյանը, ԳԱԱ ակադեմիկոսներ Ռուբեն Սաֆրաստյանը, Լենսեր Աղալովյանը, Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը, պ. գ. դ., պրոֆեսորներ Էդիկ Մինասյանը, Գևորգ Ստեփանյանը, փ. գ. թ., քաղաքագետ Միհրան Շահզադեյանը: